

**ԹԱՏՐՈՆՈՎ ՈԳԵՇՆՉՎԱԾ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԴՈՒՆՈՒ ԲԵՄԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ «ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱՉԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՄԲՈՒՄ
INSPIRED BY THEATER HARUTIUN GNDUNI'S THEATRICAL ACTIVITIES IN
"VAHRAM PAPAZIAN" THEATER TROUPE
СЦЕНИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ВДОХНОВЛЕННОГО ТЕАТРОМ
АРУТЮНА ГНДУНИ В ТЕАТРАЛЬНОЙ ТРУППЕ «ВАГРАМ ПАПАЗЯН»**

Անահիտ Բեքարյան
Anahit Bekaryan
Анаит Бекарян

anahit.bekaryan@arts.sci.am

Ներկայացվել է՝ 07.04.2025; գրախոսվել է՝ 23.02.2026; ընդունվել է՝ 14.04.2026
Received: 07.04.2025; Revised: 23.02.2026; Accepted: 14.04.2026
Представлено: 07.04.2025; рецензировано: 23.02.2026; принято: 14.04.2026

© Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2026. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-176

Ամփոփում – 1959-ին Պերճ Ֆազլյանը Լիբանանում հիմնում է «Վահրամ Փափազեան» թատերախումբը և որպես հիմնադիր-բեմադրիչ՝ ներկայացնում բազմաթիվ գործեր, որոնք գնահատվում են ոչ միայն հայ հասարակության և մամուլի կողմից, այլ նաև արաբալեզու, ֆրանսալեզու մամուլն է արձագանքում թատերախմբի ունեցած հաջողություններին: «Վահրամ Փափազեան» թատերախմբի լավագույն բեմադրություններից են Բեն Ջոնսոնի «Վոլբոնե»-ն, միջազգային համբավ ունեցող լիբանանցի դրամատուրգ Ժորժ Շիհադեի «Վասկոյի հեքիաթը», Լևոն Շանթի «Հին Աստվածները», Մոլիերի «Իսաչագողը», Ֆրանց Վերֆելի վեպի հիման վրա թատերախաղի վերածված Մելիք Քոչարյանի «Մուսա լեռան քառասուն օրը», Ռեջինալդ Ռոուզի «12 զայրացած մարդիկ» և այլն: Պերճ Ֆազլյանը բեմադրում է ոչ միայն դասական, այլև ժամանակակից հեղինակների թատերախաղեր: 1964-ից Հարություն Գնդունին նույնպես մասնակցություն է ունենում թատերախմբի աշխատանքներին: Երիտասարդ, տաղանդավոր դերասանը մասնակցում է մի շարք ներկայացումներում՝ ի հայտ բերելով ակներև կարողություն, հմայք ու տաղանդ՝ հիացմունք պատճառելով հանդիսատեսին: 1991–1993 թթ. Բեյրութի «Վահրամ Փափազեան»-ի վարչությունը Հարություն Գնդունուն հրավիրում է ստանձնելու թատերախմբի բեմադրիչի պարտականությունները: 1991–1993-ին բեմադրիչը ներկայացնում է Ջոն Փրիսթլիի, Մոլիերի, Նիլ Սայմոնի թատերախաղերը: 1979-ին Հարություն Գնդունին Բեյրութում հիմնում է իր թատերախումբը՝ «Երիտասարդական թատրոն»-ը, որը մինչև 1988 թ. բեմականացնում է հայ և օտարազգի դրամատուրգների ստեղծագործություններ: 2013-ին Հ. Գնդունին Բեյրութում հիմնում է «Միեր Մկրտչյան» թատերախումբը և մինչ օրս ներկայացնում հայ և օտար հեղինակների բազմաթիվ գործեր:

Abstract – In 1959, Berj Fazlian established the "Vahram Papazian" Theater Troupe in Lebanon. As its founding artistic director, Fazlian staged numerous productions that garnered significant acclaim not only from the Armenian community and press but also within Arabic and French-language media outlets. Notable productions by the company include Ben Jonson's *Volpone*, *The Tale of Vasco* by the internationally renowned Lebanese playwright Georges Schehadé, Levon Shant's *Ancient Gods*, Molière's *The Scoundrel*, and Melik Kocharyan's adaptation of Franz Werfel's *The Forty Days of Musa Dagh*, alongside Reginald Rose's *Twelve Angry Men*. Fazlian's repertoire spanned both classical and contemporary drama. Beginning in 1964, Harutyun Gnduni joined the troupe. As a talented young actor, Gnduni participated in various productions, demonstrating a palpable charisma and artistic prowess that resonated deeply with audiences. Between 1991 and 1993, the board of the "Vahram Papazian" Theater Troupe invited Gnduni to assume the role of artistic director. During this tenure, he staged works by J.B. Priestley, Molière, and Neil Simon. Gnduni's directorial contributions extend beyond Papazian Troupe. In 1979, he founded the "Youth Theater" (*Yeritasardakan Tatron*) in Beirut, directing a diverse repertoire of Armenian and international plays until 1988. Subsequently, in 2013, he established the "Mher Mkrtchyan" Theater Company in Beirut, where he continues to stage Armenian and international theatrical works to this day.

Аннотация – В 1959 г. Перчем Фазляном в Ливане была создана театральная труппа «Ваграм Папазян». Постановки П. Фазляна удостоились высокой оценки не только армянской общественности и периодики, но и нашли отклик в арабоязычных и франкоязычных органах печати. В ряду лучших театральных постановок труппы «Ваграм Папазян» следует назвать «Вольпоне» «Бена Джонсона», «Сказку Васко» получившего международное признание ливанского драматурга Жоржа Шихаде, «Древние боги» Левона Шанта, «Тартюф» Мольера, пьесу Мелика Кочаряна «Сорок дней Муса-Дага» (на основе романа Франца Верфеля), «12 разгневанных мужчин» Реджинальда Роуза и др. Перч Фазлян ставил пьесы не только классиков, но и современных авторов. Начиная с 1964 г. в работе театральной труппы принимал активное участие Арутюн Гндуни. Молодой талантливый актер, сыграв в ряде спектаклей, снискал симпатию зрительской аудитории, давшей высокую оценку его природным способностям и обаянию. В 1991–1993 гг. А. Гндуни правлением театральной труппы «Ваграм Папазян» был назначен режиссером означенной труппы. За годы пребывания на посту режиссера труппы Арутюном Гндуни были осуществлены постановки пьес Джона Пристли, Мольера, Нила Саймона. В 1979 г. Арутюн Гндуни основал в Бейруте театральную труппу «Молодежный театр», которая успешно работала до 1988 года, популяризируя как армянских, так и иностранных драматургов. Каждая театральная постановка, реализованная силами данной труппы, становилась событием в культурной жизни армянской диаспоры Бейрута. Следующим этапом подвижнической деятельности А. Гндуни явилось создание труппы «Мгер Мкртчян» в Бейруте – в 2013 году, которая по сей день является глашатаем армянской культуры и мирового драматургического творчества в целом, внося свою неоспоримую лепту в развитие театрального искусства.


Հիմնարարներ – Հ. Գնդունի, «Վ. Փափազեան», Թատերախումբ, Թատերախաղ, դերասան:

Keywords – H. Gnduny, "V. Papazian", troupe, play, actor.

Ключевые слова – А. Гндуни, «В. Папазян», труппа, пьеса, актер.

Ներածություն

1958-ին Լիբանանում տաղանդավոր բեմադրիչ Պերճ Ֆազլյանի ղեկավարությամբ ստեղծվում է «Վահրամ Փափազեան» թատերախումբը: Պերճ Ֆազլյանը կարողացավ ստեղծել մի թատերախումբ, որը «...պիտի կարենար կանոնավոր սերտուած խաղացանկով մը ներկայանալ հասարակութեան ու դառնալ մրցակից Համազգայինի Գասպար Իփեքեան թատերախումբին, որ այդ օրերուն Պեյրութի մէջ թատերական որակաւոր ներկայացումներու մենաշնորհեալը կը նկատուէր» (Ֆազլեան 2004, 204):



Նկ. 1. Հարություն Գնդունի, հեղինակի անձնական արխիվից

բեմադրիչ՝ Ֆազլյանը բեմականացնում է բազմաթիվ գործեր, որոնք բարձր են գնահատվում ոչ միայն հասարակության, այլև մամուլի կողմից՝ և՛ հայալեզու, և՛ արաբալեզու, և՛ ֆրանսալեզու: Շնորհիվ Ֆազլյանի, որը Լիբանանի այն ժամանակաշրջանի թատրոնի սյուններից էր, լիբանանցին բախտ է ունենում դիտելու հայերեն լեզվով բացառիկ հետաքրքիր ու խորիմաստ ներկայացումներ: «Գաղութիս թատերական հորիզոնին վրայ նոր աստղ մը փայլի սկսած է. Վահրամ Փափազեան Թատերախումբը: Իտէալապաշտ երիտասարդներու հոյլ մը, բոլորուած նուիրեալ եւ անձնուրաց ղեկավարի մը շուրջ, կը փորձեն կեանքի մեծ դպրոցեն՝ բեմէն եւ անկէ կրկին կեանքի փոխանցել բարիին, լաւին ու ճաշակաւոր գեղեցիկին շնորհները» (Թիֆինճեան 1960): Մամուլը անդրադառնում է թատերախմբի, նրա ղեկավարի ու դերասանների գործունեությանը՝ նշելով, որ «Վահրամ Փափազեան» մի անկյունադարձ էր Լիբանանի թատերական կյանքում: Հարություն Գնդունին իր մասնակցությունն է բերում Լիբանանի թատրոնի հիմնադիր, աշխարհի տարբեր երկրներում բարձր պարգևների արժանացած, տաղանդաշատ արվեստագետ Պերճ Ֆազլյանի այդ ժամանակվա բեմադրած լավագույն ներկայացումներին՝ Լևոն Շանթի «Հին Աստվածները, Մոլիերի «Տարտյուֆը», Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը», Շեքսպիրի «Միջամառնային գիշերվա երազը», «Կորսված նամակը» և այլն: Հայ պարբերականներում գրվում են դրվատանքի բազմաթիվ խոսքեր թատերախմբի, նրա գործունեության, ղեկավարի և առանձին դերասանների մասին:

1978–1988 թթ. Հարություն Գնդունին հիմնում է «Երիտասարդական թատրոն» թատերախումբը՝ ներկայացնելով տասը թատերախաղ: Չնայած Լիբանանում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմի պատճառով հազարավոր լիբանանահայեր (այդ թվում՝ արվեստագետներ) լքեցին երկիրը, սակայն գաղութում մնացին նաև թատրոնի նվիրյալներ, որոնք կարողացան խթանել գաղութի մշակութային կյանքը:

1991-ին «Վահրամ Փափազեան» թատերախմբի վարչությունը բեմադրիչ Հ. Գնդունուն հրավիրում է ստանձնելու խմբի ղեկավարությունը: 1991–1993 թթ. Գնդունին բեմադրում է Ջ. Փրիսթլիի «Ակամա խոստովանությունը», Մոլիերի «Երևակայական հիվանդը» և Նիլ Սայմոնի «Տարօրինակ ժամադրություններ» թատերախաղերը:

2013-ին Հարություն Գնդունին մի խումբ երիտասարդների հետ հիմնում է «Միեր Մկրտչեան» թատերախումբը, որի նպատակն էր ստեղծել լիարժեք և արդիական ներկայացումներ: Իր առաջին թատերախաղը՝ Ռեյ Քուննիի «Երկու կին և մեկ տղամարդ»-ը, «Միեր Մկրտչեան»-ը բեմադրեց 2014-ի ապրիլին: 2019-ին Հարություն Գնդունին կրկին ստանձնեց «Վահրամ Փափազեան»-ի ղեկավարությունը:

Բեմադրություններ Պերճ Ֆազյանի ղեկավարությամբ

1965-ին Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցին նվիրված, իրար հաջորդող բազմաթիվ հուշատոներից և հուշ երեկոներից հետո («Նոր բարձրագույն վարժարանի շրջանավարտից միության թատերախումբը» ներկայացրել է Մանուկ Խանպեկյանի «Կարմիր գետը», «Ազատամարտ» թատերախումբը՝ Լևոն Շանթի «Ճամբուն վրայ», Հակոբ Կուլյանը՝ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատունը», «Պեյրոպահայ քուլիսականներու թատերախումբը»՝ Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտը» և այլն) լիբանանահայը վայելում է «Վահրամ Փափազեան» թատերախմբի ձեռնարկած՝ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի բեմականացումը: Վեպ, որը տարիներ շարունակ հուզել է ոչ միայն հայ, այլև օտարազգի ընթերցողներին: Թատերախմբի ղեկավարությունը ընտրել է այս գործի բեմականացումը Մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ՝ դրանով իսկ իր մասնակցությունը բերելով տարելիցին: «Մեծարժեք այս գործը հարազատ պատկերացումն է Հայ ժողովուրդի գոյամարտի մէկ դրուագին, որ պիտի ներշնչէ դեռ գալիք սերունդներն ալ ընդվզումին՝ ընդդէմ թուրք ջարդարարներուն, անընկճելի կամքին որ չի գիտեր գլուխ ծռել արիւնարբու բռնակալներու առջև» (Վահրամ Փափազեան թատերախումբը 1965): «Մուսա լեռան 40 օրերը» դեռևս 1933-ին թարգմանել է արևմտահայերեն հայ բանասեր, հրապարակագիր, թարգմանիչ, խմբագիր Երվանդ Տեր-Անդրեասյանը (1865–1945): Վեպը լույս է տեսել Սոֆիայում 1935-ին և ունեցել է մի շարք հրատարակություններ: 1947-ին Ավետիք Իսահակյանը Տ. Ալեքսանյանին հասցեագրած նամակում գրում է. «Այս վեպի մասին ես առաջին անգամ լսեցի 1933–1934 թվին, Փարիզում: Պատահաբար կարդացի մի թերթում 1933 թվին գերմաներեն լեզվով լույս տեսած աչքի

ընկնող գեղարվեստական գրքերի մասին, հողվածը ստորագրել էր նշանավոր գրող Ստ. Յվայգը: Ստ. Յվայգը նշում էր 2–3 գրքերի անուններ, որոնք ամեն դրվատանքի արժանի էին: Մեկը Ֆր. Վերֆելի վեպն էր՝ «հայկական հերոսապատումը»... օտար ականավոր հեղինակի կողմից գրված այս վեպը մեր արդար դատին նվիրված անգնահատելի գանձ է, եզակի, նմանը չունեցող: Մենք խորին երախտագիտությամբ պետք է մեր սրտերում ունենանք հեղինակի սիրելի անունը: Վեպը գրված է զգացմունքով, մեծ սիրով ու սրտով: Եվ դեպի հայերն ու մեր դատը խորին համակրանքով» (Իսահակյան 1979, 37): 1936-ի ապրիլի 19-ին Նյու Յորքի լավագույն թատրոններից մեկում Հ.Յ.Դ. թատերական խումբը ներկայացնում է «Մուսա լեռան 40 օրը»՝ Եղիա Խիյմեթյանի բեմադրությամբ: Հովհաննես Զարիֆյանը 1937 թ. Նյու Յորքում ձեռնարկել է վեպի բեմականացումը (Երվանդ Տեր-Անդրեասյանի թարգմանությամբ):

«Երկար տարիներու բացակայութենէ յետոյ՝ Ամերիկա վերադարձած է անուանի դերասան Հ. Զարիֆեան եւ ձեռնարկած արդէն կարգ մը ներկայացումներ տալու Պոսթընի, Նիւ Եորքի եւ այլ հայ գաղութներու մէջ: Առաջին ներկայացումը «Մուսա Տաղի 40 Օրերը» տուաւ ան Պոսթընի մէջ: Ինչպէս կ'ակնկալուէր՝ թատերասրահը ամբողջովին լեցուած էր եւ շատ մը անձեր նոյնիսկ հեռաւոր քաղաքներէ եկածներ ստիպուեցան ետ դառնալ, աթոռ գտնել չկարենալով: ...Կասկած չկայ, որ «Մուսա Տաղի 40 Օրերը» մեծ հմայք մը ունի մեր ժողովուրդին համար» – գրում է «Հայրենիք» ամսագիրը (Ա.Պ. 1937):

Մելիք Քոչարյանի՝ թատերախաղի վերածած այս գործի բեմադրությունը «Վահրամ Փափագեան» թատերախմբի կողմից արժանացել է բացառիկ գնահատանքի:

Բեմադրությանը մասնակցել են մոտ 30 դերակատար, որոնց մեջ Երվանդ Քասունու (Գաբրիել Բագրատյան), Պերճ Ֆազլյանի (մըսյո Մորիս) կողքին էր Հովսեփի դերով հանդես եկող, խոստումնալից դերասան Հարություն Գնդունին: Թատերախաղի բեմադրությանը անդրադարձել են ոչ միայն «Սփյուռք», «Զարթոնք», «Այգ» պարբերականները, այլև Լիբանանում լույս տեսնող "Le Jour", "L'Orient" ֆրանսիական թերթերը: Հայկական եղեռնի 50-ամյակին նվիրված այս ներկայացումը, բեմադրված տաղանդավոր բեմադրիչ, դերասան Պերճ Ֆազլյանի կողմից, ջերմ ընդունելության արժանացրեց թատերասեր հասարակայնությունը: «Ի պատիվ թատերախումբին պետք է ըսել, որ այս դժուարին եւ մեծածաւալ գործին բեմադրութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ: Բեմի սահմանափակ կարելիութիւններէն առաւելագոյն չափով օգտուելով՝ Պերճ Ֆազլեան յաջողած էր շարժանկարային ծաւալ ու շարժում ունեցող այս կտորը տպաւորիչ կերպով բեմադրել, նոյն այդ բեմին վրայ տալով տարագրութեան ու ջարդին ընդհանուր մթնոլորտը, մուսատաղցիներու (սուետացիներու) իրենց կեանքին եւ ազատութեան կառչելու կամքը, ինքնապաշտպանութեան պատրաստութիւններն ու մագլցումը դեպի Մուսա լեռ...» (Հ.Ե.Ը. Վահրամ Փափագեան թատերախումբը 1965), – գրում է «Սփյուռք» շաբաթաթերթը:

1967-ին Պերճ Ֆազլյանը բեմադրում է Ուիլյամ Շեքսպիրի «Միջամառնային գիշերվան երազը» կատակերգությունը: «Միջամառնային գիշերվա երազը» Շեքսպիրի ամենառոմանտիկ թատերախաղերից մեկն է: Գրվել է 1594–1596 թվականներին: Շեքսպիրի հայ թարգմանիչներից հիշատակենք Հովհաննես Խան-Մասեհյանին (1864–1931), Խաչիկ Դաշտենցին (1909–1974), Վահան Թոթովենցին (1893–1938), Գևորգ Բարխուդարյանին (1835–1913) և նկարիչ, արվեստի տեսաբան, թարգմանիչ Վարդգես Սուրենյանցին (1860–1921):

Շեքսպիրի որոշ ստեղծագործություններ, ինչպես նաև «Միջամառնային գիշերվան երազը» անգլերենից հայերեն է թարգմանել Վարդգես Սուրենյանցը: Նրա թարգմանությունների մեծ մասը մնացել է անտիպ, սակայն «Միջամառնային գիշերվան երազ»-ի թարգմանությունը (արված 1898-ին) պահպանվել է: Այս կատակերգությունը Վ. Սուրենյանցի թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով լույս է տեսել «Հուշարար մատենաշարի 14-րդ համարում 1912-ին: «Վահրամ Փափազեան» թատերախմբի՝ Միջամառնային գիշերվան երազի» արևմտահայերեն արձակ թարգմանության հեղինակը հայանպաստ ու հայրենանվեր գործունեությամբ տոգորված, սփյուռքահայ անխոնջ գործիչ Լևոն Թորոսյանն է:

Ֆրանսալեզու «Լ'Օրիան» թերթը (1967, 29 ապրիլի) բարձր է գնահատել ներկայացումը՝ նշելով, որ Պերճ Ֆազլյանի «գունագեղ բեմադրությունը, շրջուն բեմի մը բազմաթիւ կարելիութիւնները, «Ֆանթեզիով» լեցուն զգեստավորումը և հատկապէս դերակատարները այս ներկայացման տուփն երաժշտանման հեքիաթի մը տպաւորութիւն» (Ֆազլեան 2004, 272): Թատերգության զգեստավորումը և բեմահարդարումը ստանձնել էր Սիրվարդ Ֆազլյանը: Լիբանանցի հայտնի բանաստեղծ, փիլիսոփա, հայասեր Սաիդ Աքըլ (1911–2014), որը ներկա է եղել առաջին ներկայացմանը, գրել է հետևյալը. «առաջին անգամ ըլլալով կը դիտեմ օտար լեզուով ներկայացում մը, լեզու մը, որ Լիբանանի մէջ շատերուն խոսակցական լեզուն է: «Միջամառնային գիշերվան երազը» թատերգութիւնը, որուն առաջին ներկայացումը տեղի ունեցաւ ուրբաթ օրը, պիտ կրկնուի տասներկու անգամներ» (Ֆազլեան 2004, 273): Հարություն Գնդունին այս թատերախաղում մարմնավորել է Էգեսոսի կերպարը, և իր իսկ խոսքերով ասած՝ այդ կերպարի միջոցով դերասանի առջև բացվեց թատրոնի դարպասը: Եվ այդ երազած աշխարհում Հ. Գնդունին ապրեց ավելի քան վեց տասնամյակ:

1967-ին «Վահրամ Փափազեան» թատերախումբը ներկայացնում է ռումի-նացի թատերգակ Իոն Լուկա Կառաջիալեի (Ion Luka Caragiale 1852–1912) «Կորսուած Նամակ մը» թատերգությունը՝ Պերճ Ֆազլյանի բեմադրությամբ: Ավելի քան 20 լեզվով բեմադրված այս թատերգությունը առաջին անգամ հայերեն է թարգմանվել Պերճ Ֆազլյանի և Լևոն Թորոսյանի կողմից: Կառաջիալեի թատերգության առաջին ներկայացումը (պրեմիերան տեղի է ունեցել 1884-ի նոյեմբերի 13-ին Բուխարեստում) ունեցավ բացառիկ հաջողություն: Թատերախաղի գործողությունները տեղափոխված են մեր ժամանակները: Խաթարված բարքերը, կեղծիքը, ճղճիմ և փոքրոգի անձնական շահերը, փառատենչությունը,

պետական և կուսակցական ղեկավարների կողմից դրսևորում են «ի շահ ժողովրդի, հանուն արդարության և ճշմարտության» քողի տակ: Դեռևս 1884-ին բեմադրված այս թատերգության առաջադրած հարցերը բոլոր ժամանակների և ազգերի համար հրատապ են և այժմեական: Թատերգության գործողությունները տեղի են ունենում պառլամենտական ընտրությունների նախօրեին, մի գավառական քաղաքում. սիրային նամակ է ստանում տեղական պահպանողական կուսակցության քաղաքապետի տիկինը, բայց կորցնում է վարկաբեկող փաստաթուղթը, որն անցնում է ձեռքից ձեռք և օգտագործվում որպես գեներլդիմադիր կուսակցության թեկնածուների կողմից՝ դառնալով մի շարք զվարճալի, հետաքրքրաշարժ իրադարձությունների աղբյուր: Այս կատակերգությունը մինչ օրս չի իջնում մի շարք երկրների բեմերից: Բեմադրությանը մասնակցել է «Վահրամ Փափագեան» թատերախումբը՝ գրեթե իր լրիվ կազմով: Մամուլը բարձր է գնահատել այս ներկայացումը, դերասանների խաղը: «Անհրաժեշտ է ամբողջական գնահատանք ընծայել թատերախումբին, որ համերաշխ ու համադրական խաղարկութեամբ մը կրցաւ այս երկին բարձրութեան վրայ գտնուիլ, առանց թոյլ պահերու հանդիսատեսը հեփհուն բեմին կապուած պահելով» (Նագգաշեան 1967) – գրում է «Չարթոնքը»: Քաղաքապետ Ստեֆան Տիբատեքոսի դերով հանդես է եկել երիտասարդ դերասան Հարություն Գնդունին, որը, ըստ մամուլի վկայության, «նոր ոստում մը արձանագրեց բեմարվեստի մէջ» (Թղթակից 1967): Հոդվածագիրը նշում է, որ «Օրուան հայտնութիւնը եղաւ երիտասարդ ուժ մը՝ Յարություն Գնդունի, որ գոհացուցիչ կերպով խաղցաւ քաղաքապետի դժուարին դերը: Քաջութիւն պահանջող ընտրութիւն մըն էր այս մեկը թե՛ ղեկավարէն և թե՛ դերասանէն: Ի պատիւ երկուքին քաջութիւնը արդարացուած էր» (Թղթակից 1967): Բեմադրությանը և դերասանների խաղին անդրադարձել են նաև «Չարթոնք», «Արարատ», «Շիրակ» և այլ պարբերականներ:

1969 թվականը Հարություն Գնդունու համար եղավ բավական բեղուն տարի: Նա հանդես եկավ թատերախաղերում՝ Պերճ Ֆազլյանի բեմադրությամբ. Լևոն Շանթի «Հին Աստուածներ» թատերգությունում՝ արեղայի դերով, Գրիգոր Սաթամյանի բեմադրությամբ, Շեքսպիրի «Բազում աղմուկ վասն ոչինչի» թատերգության մեջ՝ Քլոդիոյի դերով: Նա նաև Հայկազյան համալսարանի «Հայկական ակումբ»-ի թատերախմբով բեմադրել է Կարլո Գոլդոնիի «Պանդոկապետուհին» թատերախաղը, որտեղ ստանձնեց Մարկիզի դերը:

Գ. Սունդուկյանից, Հ. Պարոնյանից, Ա. Շիրվանզադեից և Դ. Դեմիրճյանից հետո Լևոն Շանթի «Հին Աստվածները» հայ թատրոնում ամենից խաղացված պիեսն էր: Այն տպագրվել Կ. Պոլսում՝ 1912-ին: Թատերգությունը շահել է Թիֆլիսի Հայոց դրամատիկական ընկերության պիեսների մրցանակաբաշխության «Մարիամ Մակարեան» մրցանակը: «Հին Աստվածների» առաջին բեմադրությունը իրականացրել է ռեժիսոր Արմեն Արմենյանը 1913-ի հունվարի 14-ին Թիֆլիսում՝ Արտիստական ընկերության թատրոնում: Պիեսի ձևավորման աշխատանքին մասնակցել են Գևորգ Բաշինջաղյանը (1857–1925), Արշակ Ֆեթվաճյանը (1866–1947), Եղիշե Թադևոսյանը (1870–1936): Գլխավոր դերերում հան-

դես են եկել Արմեն Արմենյանը, Հովհաննես Աբելյանը, Միքայել Մանվելյանը, Իսահակ Ալիխանյանը, Օլգա Մայսուրյանը, Եկատիրինա Դուրյան-Արմենյանը: «Հին Աստվածները» մեծ հաջողություն է ունեցել նաև Բաքվում: Առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1913-ի փետրվարի 10-ին Նիկիտինների թատրոն-կրկեսում: Ներկայացումներին իրենց մասնակցությունն են բերել Հովհաննես Զարիֆյանը, Սիրանույշը, Սաթենիկ Ադամյանը, Արշավիր Շահխաթունին:

1919-ին Կ. Պոլսում Հայ դրամատիկ թատերախումբը Աշոտ Մադաթյանի և Մկրտիչ Զանանի (1892–1938) բեմադրությամբ ներկայացրել է «Հին Աստվածներ» թատերախաղը, իսկ պիեսի առաջին ցուցադրությունը Փարիզում եղել է 1920-ի հունիսի 26-ին՝ Մկրտիչ Զանանի ղեկավարությամբ:

Լիբանանահայ բեմադրիչ, դերասան, երգիծանկարիչ, թարգմանիչ Տիրան Աճեմյանը 1921-ին Սիրիայում հիմնում է Երիտասարդաց միության թատերախումբը՝ բեմադրելով մի շարք պիեսներ, այդ թվում՝ «Հին Աստվածները»: Հովհաննես Զարիֆյանը հանդես է եկել Նյու Յորքում «Հին Աստվածներ» դրամայում 1924-ին: 1929-ի նոյեմբերի 3-ին Կահիրեի «Էզպեթի» թատրոնում Կոստանյան ընտանիքի անդամների և տեղական ուժերի մասնակցությամբ բեմադրվել է Լ. Շանթի դրաման: 1944-ին Գասպար Իփեքյանը Բեյրութում համազգայինի թատերախմբով բեմադրել է «Հին Աստվածները»: Տասնամյակներ շարունակ թատերախաղը ներկայացվել է Անդրկովկասում և Սփյուռքում: 1969-ին Պերճ Ֆազլյանը պիեսը բեմադրել է «Վահրամ Փափազեան» թատերախմբում: Ինչպես գրում է «Չարթունք» օրաթերթը, «Հին Աստվածները» դարձաւ ներկայացում մը, որը կարժեր տեսնել գլխավորաբար իր ստեղծած պատկերներուն համար» (Քեօսեան 1969): Թատերախոսները առանձնապես բարձր են գնահատել Աբեղայի դերում հանդես եկող Հարություն Գնդունուն: «Արարատը» գրում է. «Յիշենք, որ դերասանների մեծամասնությունը երիտասարդներ էին՝ գնահատելի երեւոյթ: Այդ երիտասարդների մէջ արժանիներ կային, որոնց առաջին կարգին կու գայ Յարութին Գնդունի, որ գնահատելի ոստում մը կը կատարէ դեպի առաջ» (Սամո 1969):

Սփյուռքահայ մամուլը ջերմորեն արձագանքեց այս բեմադրությանը, հատկապես արեղայի կերպարը մարմնավորած Հ. Գնդունու համոզիչ դերակատարությանը:

«Սփյուռքը» մասնավորապես անդրադառնում է Հ. Գնդունու բացառիկ խաղին. «Յարութին Գնդունի՛ Աբեղայի դերով, կրցաւ ուշադրութիւն գրաւել: Լաւ ըմբռնած էր իր դերը: Տառապանքի զուսպ ու խելացի դիմախաղերով, ձեռքերու չափաւոր ճշգրիտ շարժումներով, ձայնի ու շեշտի տիրականութեամբ եղաւ յաջող Աբեղայ մը» (Արծրունի 1969): Գ. Գրիգորյանը «Ազդակի» իր թատերախոսականում գրում է «Հոյակապ էր Աբեղան (Յարութին Գնդունի): Աբեղայի տարիքով այդ տղուն խաղարկութիւնը պարզապէս հոյակապ էր» (Գրիգորեան 1969): Հոդվածագիր Բաբկեն Փափազյանը. «Ուշագրաւ էր իր խաղարկութեամբ Յարութին Գնդունին Աբեղայի դերով: Պետք է հետեւիլ Յարութին Գնդունիի, ապագա խոստացող սիրող դերասան մըն է» (Բ.Փ. 1969):

1970-ի հունվարին թատերասեր հասարակությունը Գալուստ Կյուլպենկյան թատերասրահում վայելեց Մոլիերի լավագույն գործերից մեկը՝ «Խաչագողը», Պերճ Ֆազլյանի թարգմանությամբ ու բեմադրությամբ: Ինչպես նշում է «Ձարթոնք» թերթը, «Առաջին անգամ ըլլալով, Հ.Ե. ընկերակցութեան Վ. Փափազեան թատերախումբը յանդգնութիւն կունենայ ներկայացնելու Գ. Կիւլպենկեան սրահին մէջ անմահ երգիծաբան Մոլիերի այս ծաղկող ու խարազանող կատակերգութիւնը» (Գ.Մ. 1970):

Տարտյուֆի՝ գլխավոր դերով հանդես եկող տաղանդավոր բեմադրիչը թարգմանել էր թատերգությունը և ստանձնել էր նաև բեմահարդարումը: «Վահրամ Փափազեան» թատերախումբը այս անգամ ևս փայլեցաւ ներդաշնակ խաղարկութեան բարձր արժանիքներով», – գրում է հոդվածագիրը և նշում, որ «...թատերախմբի գլխավոր մտահոգութիւն է թատրոնի միջոցով նպաստած ըլլալ մեր մշակոյթի տարածման եւ հայապահպանման բախտորոշ գործին» (Պ.Օ. 1970):

«Տարտյուֆ կամ Խաչագողը», գրված 1664-ին, մինչ օրս առկա է աշխարհի թատրոնների խաղացանկերում: Պերճ Ֆազլյանի բեմադրությամբ Մոլիերի «Տարտյուֆը» ունեցել է բացառիկ ընդունելություն: Տպավորել են նաև կատարյալ բեմահարդարումը, զգեստավորումը, հուզիչ և գեղեցիկ խաղը: Վալերի դերով հանդես է եկել Հ. Գնդունին: «Ազդակից» տեղեկանում ենք, որ «Յստակ առոգանութիւնն ու զուսպ դիմախաղերը մեծապես օժանդակեցին Յարութիւն Գնդունիի, որ յաջողութեամբ ներկայացուց Վալերի տիպարը» (Արծրունի 1970): «Ձարթոնքը» նույնպես արձագանքում է Հարություն Գնդունու բնական, գեղեցիկ խաղին. «Յարութիւն Գնդունի յամառ աշխատող մըն է եւ անկասկած օր մը թատերական մարզին մէջ կրնայ փնտռուած անուն մը դառնալ» (Ձարթօնք 1970, 16 հունվարի), իսկ Ն.Թ. հոդվածագիրը նկատում է. «Յարութիւն Գնդունի իր այս դերակատարմամբ (Վալեր) փաստը տուաւ իր յառաջադիմութեան, ամբողջովին տալով իրմէ ակնկալուածը» (Ն.Թ. 1970):

1971-ին Պերճ Ֆազլյանի «բեմադրությամբ «Վահրամ Փափազեան» թատերախումբը ներկայացնում է Ռեջինալդ Ռոուզի (Reginald Rose, 1920–2002) «12 զայրացած տղամարդիկ» թատերախաղը, որն առաջին անգամ բեմադրվել է Սան Ֆրանցիսկոյում 1955-ին: Պատանուն մեղադրում են հարազատ հոր սպանության մեջ: 12 երդվյալ ատենակալները հավաքվում են կայացնելու վճիռը: Նիստի սկզբում համարյա բոլորը գտնում են, որ ամբաստանյալը մեղավոր է և 12 հոգուց միայն մեկը չի հավատում: Նա որոշում է ապացուցել իր ճիշտ լինելը: Կհաջողվի՞ նրան միայնակ փոխել նաև մյուս 11-ի կարծիքը: Հարություն Գնդունին, որը մասնակցել է այս թատերախաղում, ինչպես նշում է Արա Արծրունին, ունեցել է տարբերվող, բացառիկ խաղարկություն: Թատերախոսը շատ բարձր է գնահատում դերասանի խաղը՝ նշելով. «Եթէ Յարութիւն Գնդունիի խաղարկութիւնը այնքան գեղեցիկ, հաճելի և խանդավառ էր, այդ կը պարտէր չափի եւ կշիռի իր ճշգրտութեան: Իր խաղը հարուստ էր զանազանութիւններով: Անվարան կրնանք ըսել թէ Գնդունի, ինքնավստահ եւ հեզասահ խաղով մը, կրցաւ փրկել ներկայացումը: Իր դիմախաղը սկսած է մտնել փոքր նրբութիւններու

պրպտումին մեջ, իսկ ձեռքի շարժումները դարձած են շատ բնական: Գնդունի հասած է գովելի բարձրության մը. անկեղծորեն կը շնորհաւորենք զինք» (Արծրունի 1971): «Ձարթոնք» պարբերականը նույնպէս անդրադառնում է այս թատերախաղին, նշելով, որ «Յարութին Գնդունին, ներկայացման սկիզբէն մինչեւ վերջ, բեմական տպաւորիչ ու զուսպ ներկայութեամբ մը, իր դերին պահանջած կենդոնացումով կը վարէ խաղը՝ դատի քաշելով իր պատահական պաշտոնակիցները, վերլուծելով անոնց տրամադրութիւններուն նկարագիրը, բառ առ բառ խորտակելով իրեն հակադրող փաստարկութիւնները, յայտնաբերելով եզրափակիչ ճշմարտութիւնը» (Թովալեան 1971): Հոդվածագիր Ն. Թովալեանի կարծիքով, բեմադրիչ Պերճ Ֆազլյանը այս ներկայացումով յաջողած է ցայտուն ու զուսպ գիծերով տալ մարդկային մէկ ողբերգութիւնը, որ ի վերջոյ կ'եզրափակուի ճշմարտութեան յաղթանակով, հաւատարիմ՝ հեղինակին պատգամին թէ՛ – Կ'արժէ պայքարիլ արդար դատելու համար, նոյնիսկ 11-ի դէմ մէկի համեմատութեամբ» (Թովալեան 1971):

Բեմադրություններ Գրիգոր Սաթամյանի ղեկավարությամբ

1969-ին «Վահրամ Փափագեան» թատերախմբի վարչությունը հրավիրում է բեմադրիչ, տաղանդավոր դերասան, թարգմանիչ, թատերագետ Գրիգոր Սաթամյանին (ծնվ. 1940) բեմադրելու Շեքսպիրի «Բազում աղմուկ վասն ոչինչի» կատակերգությունը: Գրիգոր Սաթամյանը իր առաջին թատերական քայլերը արել է Պերճ Ֆազլյանի ղեկավարած Հ.Բ.Ը.Մ. Հ.Ե.Ը.-ի «Վահրամ Փափագեան» թատերախմբում՝ դերեր ստանձնելով թատերախմբի հիմնադրման օրից, 1959 թ. մինչև 1975 թ.՝ դառնալով նույն խմբի բեմադրիչներից մեկը (1966–1967, 1969, 1970–1975): Բեմադրել է 75-ից ավել թատերախաղեր, մարմնավորել ավելի քան 80 հերոսների: Թարգմանել է պիեսներ և նկարահանվել մի շարք ֆիլմերում: 1964-ին Բեյրութի ամերիկյան համալսարանը ավարտելուց հետո նա մեկնում է Անգլիա և մասնագիտանում London School of Film Technique դպրոցում: Հետևելով Անգլիայի Bristol Old Vic. Theatre School-ի դասընթացներին՝ ստանում է դերասան-բեմադրիչի վկայական: 1969-ին իր թատերական կրթությունը ավարտելով Լոնդոնում՝ վերադառնում է Բեյրութ և ձեռնամուխ լինում թատերական բեմադրություններ անելու: «Վահրամ Փափագեան» թատերախմբում Գ. Սաթամյանը բեմադրում է «Ստախոսը», «Բազում աղմուկ վասն ոչինչի», «Կասկածը կնոջ մտքին մեջ», «Տիկնոջ հանգուցյալ ամուսինը», «Մեծապատիվ մուրացկանները» և այլ գործեր: «Յատկապէս Շեքսպիրի այս («Բազում աղմուկ վասն ոչինչի» – Ա.Բ.) գործը որոշեցի ներկայացնել, որովհետև անոր նիւթը լաւապէս կը յարմարի մեր ժողովուրդի ընկերային բարքերուն: Թատրոնը ինձի համար դպրոց մը չէ միայն, այլ զանազան արուեստներու միաձուլում մը, ինչպէս գրականութիւն, երաժշտութիւն, դերասանութիւն, պար, որ կը ներկայացուի ժողովուրդին» (Թղթակից 1969): Հաջող բեմադրությամբ նպաստել են նաև Մինաս Գանգրունու (1929–2009) երաժշտությունը և Վարուժան Պետիկյանի թարգմանությունը: Հ. Գնդունին այս ներկայացման մեջ հանդես է եկել Քլոդիոյի

դերով: «Գնահատելի է իր բեմական ինքնավստահ կեցվածքը: Զուսպ դիմախաղերով ու մաքուր առոգանութեամբ օժտուած այս համակրելի երիտասարդին ձեր ուշադրութեան կը յանձնենք (Արծրունի 1969)», գրում է Արա Արծրունին:

1970-ին հանդիսատեսը ներկա է լինում Գրիգոր Սաթամյանի մի այլ բեմադրության՝ Ժորժ Ֆեյդոյի (Georges Feydeau, 1862–1921) «Կասկածը կնոջ մտքին մեջ» թատերախաղին: 60 պիեսի հեղինակ, վոդևիլ ժանրի թագավոր Ժորժ Ֆեյդոյի թատերախաղերը էկրանավորվել են դեռևս 1912-ից: «Կասկածը կնոջ մտքին մեջ» կատակերգությունը էկրանավորվել է 1956-ին և 1997-ին, Լուի դը Ֆյունեսի և Ժան Պոլ Բելմոնդոյի մասնակցությամբ: «Ֆեյտոն ընտրելուս բուն պատճառը հայ թատրոնը թօթափել իր ասանդական նեղմիտ լուծեն», – գրում է Գրիգոր Սաթամյանը, – կը բավե պահ մը միայն մեր շուրջը դիտել տեսնելու համար թե միջազգային թատրոնը ինչ նուաճումներու մէջ է, եւ ինչպես հսկայաքայլ յառաջ կ'երթայ, մինչ հայկական թատրոնը Շիրվանգատեի աշխարհին մէջ լճացած տեղքայլ կընէ: ...Ֆեյտոն իր ժամանակի հեղինակն է. հետևաբար իր թատերգութիւններուն մեջ ան ներկայացուց իր ժամանակի տիպարները, բարբերն ու սովորութիւնները: Ինչպես որ Օտեան, Շիրվանգատե, ու Պարոնեան իրենց թատերգութիւններուն մէջ նոյնը ըրին» (Սաթամյան 1984, 205): Ըստ մամուլի վկայության, ներկայացումը հանդիսատեսի մոտ անջնջելի պիտի մնա: Այս թեթև, սահուն ներկայացումը մոռացնել տվեց, որ սիրողների խմբի բեմադրություն է: Յուրաքանչյուր դերասան հանդես եկավ ընդգծված շնորհալի խաղարկությամբ: Էթիենի կերպարը մարմնավորել է Հարություն Գնդունին:

Բեմադրություններ Հարություն Գնդունու ղեկավարությամբ

1975–1988 թթ. «Վահրամ Փափազեան» թատերախումբը Լիբանանի քաղաքացիական պատերազմի պատճառով գործում էր ընդհատումներով: Լիբանանի ողբերգությունը անպատմելի աղետներ բերեց ծաղկուն, հայաշունչ գաղթօջախին: Տասնհինգ տարի իր բեղուն գործունեությամբ դափնեպսակներ նվաճած, հանդիսատեսին հրաշք ակնթարթներ պարգևած, 1959-ին հիմնված «Վահրամ Փափազեան» թատերախումբը լիբանանյան դժվարին տարիներին ընդհատեց իր գործունեությունը: Մի թատերախումբ, տաղանդաշատ դերասանական կազմով, որ ելույթներ ունեցավ ոչ միայն լիբանանահայ գաղթօջախում, այլև Անգլիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Հայաստանում: 1959-ից մինչև 2020 թ. Հ.Ե.Ը. «Վահրամ Փափազեան» թատերախումբը ունեցել է տասը բեմադրիչ: Պերճ Ֆազլյանից և Գրիգոր Սաթամյանից հետո թատերախումբը ղեկավարել են Վաչե Ատրունին, Զավեն Գալստյանը, Թորոս Սարգիսյանը, Վաչե Տոնեռյանը, իսկ 1991–1993 և 2019-ին՝ Հարություն Գնդունին: 1991-ին «Վահրամ Փափազեան» թատերախմբի վարչությունը հրավիրում է բեմադրիչ Հ. Գնդունուն ստանձնելու խմբի ղեկավարությունը: Ահռելի պատասխանատվության զգացումը, գրեթե ամենօրյա քրտնաջան աշխատանքը դերասանական կազմի հետ տվեցին հիանալի արդյունքներ. բեմադրվեցին պատշաճ ներկայացումներ: Գնդունին շատ լավ էր հասկանում, որ «արվեստը փախուստ է այս ճղճիմ ու

ճնշող պայմանականությունների աշխարհից: Այն մեզ տանում է ետ՝ դեպի իրականության բուն աղբյուրները» (Կասսիեր 2008, 247): 1991-ի վերջերին «Վահրամ Փափազեան» թատերախումբը Հարություն Գնդունու ղեկավարությամբ բեմադրում է անգլիացի վիպասան, սցենարիստ, թատերագիր, թատրոնի բեմադրիչ Ջոն Փրիսթլիի (1894–1984) «Ակամա խոստովանություն (Քննիչի մը այցելութիւնը – An Inspector Calls)» դետեկտիվ թատերգությունը Հակոբ Տեր-Մելքոնյան սրահում: Դա XX դարի անգլիական թատրոնի լավագույն թատերգություններից մեկն է: Պիեսի գործողությունները տեղի են ունենում 1912-ին Բրամլի արդյունաբերական քաղաքում: Բըրլինգների հարուստ ընտանիքը տոնում է Բըրլինգի դստեր՝ Շեյլայի նշանադրությունը Ջերալդ Քրոֆթի հետ: Ներկա են ընտանիքի բոլոր անդամները, և պրն Բըրլինգը բաժակ է բարձրացնում դստեր նշանադրության առթիվ, իսկ Ջերալդը Շեյլայի մատին դնում է նշանադրության մատանին: Այդ պահին հայտարարվում է քննիչի ժամանման մասին, որը հայտնում է, թե հետաքննում է երիտասարդ կնոջ՝ Էվա Սմիթի ինքնասպանության հարցը: Պարզվում է, որ նրա մահվան համար մեղավոր են... ընտանիքի բոլոր անդամները: Բեմադրությանը արձագանքել են «Արարատ», «Ձարթոնք», «Սփյուռք», «Շիրակ» պարբերականները: «Յարուֆ Գնդունի իր երկար տարիներու բեմադրական գործին մէջ միշտ ալ նախընտրած է «ծանր» բիեսներ, մանավանդ խճճուած ու հանգուցուած հարցեր բովանդակող գործեր: «Ակամա խոստովանութիւնը» բացառութիւն չկազմեց: Դերակատարներու նվագագոյն թիվով (ընդամենը՝ 7 հոգի) բեմադրիչը յաջողեցաւ հանդիսատեսը «զամել» բեմին ու ուշի ուշով հետևել «քննիչ»ին ճնշման տակ այնտեղ զիրար հաջորդող զգայացունց յայտնութիւններուն (Սփիւռք 1992, Մշակութային բաժին):

Բեմադրությանը մասնակցել են ինչպես փորձառու, այնպես էլ սկսնակ դերասաններ, որոնք, սակայն, կարողացել են իրականացնել մի ամբողջական, գեղեցիկ ներկայացում:

1992-ին նոյեմբերի 13-ին Բուրջ Համուդի «Հովհաննես Պողոսյան» թատերասրահում Հ.Բ.Ը.Մ. «Վահրամ Փափազեան» թատերախումբը ներկայացրել է Նիլ Սայմոնի «Տարօրինակ ժամադրություններ» թատերախաղը՝ Հարություն Գնդունու բեմադրությամբ:

«Լուրջ ու բժախնդրորէն պատրաստուած թատերական այս երեք պատկերներուն մէջ դերեր վերցուցած էին, արդէն իսկ բեմական որոշ փորձառութեան տիրացած դերակատարներ Կալիա Միսիսեան, Յովակիմ Քէշիշեան, Դանիէլ Քէօրօղեան, Կասիա Էսկիճեան եւ Յարութիւն Գնդունին, որոնք գնահատելի խաղարկութիւն մը ցոյց տուին իրենց ծայնային սահուն ելեւէջներով յստակ առոգանութեամբ եւ կերպարներու ճիշդ մեկնաբանութեամբ, – գրում է թատերախոսը:

Սույն թատերապատկերներուն թարգմանութիւնը կատարած էր բեմադրիչ եւ դերասան Յարութիւն Գնդունի: – Պէտք է նշել որ, ի պատիւ թարգմանիչին, գործածուած էր բաւական մաքուր և սահուն հայերէն լեզու մը» (Թղթակից 1992): Բարձր մակարդակով բեմադրված ներկայացումը ոչ միայն պատիվ է բերել թատերախմբի մասնակիցներին, այլև հարստացրել է թատերախմբի թա-

տերացանը: «Շիրակ» գրական ամսաթերթում 1992-ի հունվար-փետրվարին Հարություն Մաթյանը գրում է. «Իրապես շնորհավորելի է այսպիսի փիեսի մը ընտրություն: Ջայն որոշողներուն մոտ մենք կը նշմարենք առնուազն ճաշակի և գրական հասկացողութեան յարգելի մակարդակ մը» (Մաթեան 1992):

2019-ի մարտի 24-ին Բուրջ Համուդի «Հակոբ Տեր-Մելքոնեան» թատերասրահում «Վահրամ Փափազեանը» ներկայացրել է անգլիացի սցենարիստ, դրամատուրգ Մայքլ Բոունիի (Michael Cooney, 1967) «Ակամա ստախոսը» (Cash on Delivery) կատակերգությունը՝ Հարություն Գնդունու թարգմանությամբ և բեմադրությամբ: Այն վաթսուամյա «Վահրամ փափազեան» թատերախմբի 58-րդ ներկայացումն էր: «Յարութ Գնդունի միաժամանակ համախմբած էր երիտասարդ եւ նորեկ տարրեր՝ անոնց մէջ սէր արթնցնելու հայ բեմին եւ թատրոնին հանդէպ» (Հ.Բ.Ե.Մ. Վահրամ Փափազեան թատերախումբին նորագոյն յաջողութիւնը 2019), – գրում է թատերախոսը: Դեպքերի զարգացումով բացահայտվում են մարդկային տկարություններ, կեղծիք, շողոքորթություն, սուտ, խաբեբայություն և այլ արատներ:

«Պէտք է ըսել, որ հանրաժանօթ բեմադրիչ Յարութ Գնդունի բաւական մեծ վարպետութեամբ լիբանանեան բեմին պատշաճեցուցած էր անգլիացի գրող Մայքլ Գունիի «Cash On Delivery» զաւեշտը: Իւրաքանչիւր դերասան հմտօրէն տիրապետած էր իր կերպարին» (Հ.Բ.Ե.Մ. Վահրամ Փափազեան թատերախումբին նորագոյն յաջողութիւնը 2019): Հանդիսականները վայելեցին թատերական երեկոն, որը թատրոնի առաքելության հավատով լեցուն Հարություն Գնդունու տքնաջան, հետևողական աշխատանքի արդյունքն էր: «Յարութ Գնդունի որպէս բեմադրիչ, ինչպէս միշտ, այս անգամ եւս փաստեց, որ ինքը բժախնդիր, փորձառու եւ հմուտ բեմադրիչ մըն է, ունի թատերական վաստակ եւ բեմադրելու կարողութիւն: Անոր դրոշմը զգալի էր իւրաքանչիւր դերասանի (մանաւանդ նորեկներուն) վրայ, որոնք բարձր մակարդակով ներկայացուցին «Ակամա ստախոսը» կատակերգութիւնը» (Սահակեան 2019): կարդում ենք «Արարատ» օրաթերթում: Թատերագիրը բարձր է գնահատել բեմադրիչ Հարություն Գնդունու բեմադրությունը: Իր այս բեմադրությամբ թատերախումբը փաստեց, որ «վերագտած է իր նախկին վերելքը եւ ունի ատաղձ յետագային մեզի ներկայացնելու ծանր ու լուրջ թատերախաղեր, որոնք կրնան խօսիլ տալ իրենց մասին» (Սահակեան 2019): «Ակամա ստախոսը» թատերախաղի բեմադրությանը անդրադարձել են նաև «Ծաղիկ», «Ազդակ» «Խոսնակ» պարբերականները:

Եզրակացություններ

Հարություն Գնդունին անմնացորդ նվիրումով ծառայում է հայ թատրոնին՝ հանդես գալով ոչ միայն որպես դերասան, այլև բեմադրիչ, թատերագիր: Իր խաղարկություններում կերտած հերոսների կերպարանավորումներով նա անմոռաց պահեր է պարզևում թատերասերներին: Լիբանանահայ թատրոնի առաջապահ գործիչը բժախնդրորեն է մոտենում յուրաքանչյուր կերպարի կերտ-

մանը: Իր չճերացող ստեղծագործական մտքով, անսահման երևակայությամբ ներկայացնում է լուրջ ու որակյալ թատերախաղեր, քանի որ հավատում է, որ «թատրոն ասածը եկեղեցի է, և մարդը այնտեղ գնում է աղոթելու, հաղորդակցվելու գեղեցիկի, վեհի, ճշմարիտի հետ, մթնում է դահլիճը, բեմը՝ լուսավոր, ինչպես խորան» (Արզումանյան 2024, 131):

Շնորհակալական

Իմ երախտիքի խոսքն եմ ուղղում տաղանդավոր դերասան, բեմադրիչ Հարություն Գնդունուն, որի արժեքավոր աշխատությունում (Լիբանանահայ թատրոն 1920–2020) զետեղված փաստացի նյութերը նշանակելիորեն նպաստեցին այս հոդվածի կայացմանը:

Գրականություն/References/Литература

1. Ա.Պ. 1937, Ամերիկահայ կեանք. Թատերական, Հայրենիք, N 4, 168:
A.P. 1937, Armenian-American Life: Theatrical, Hairenik, N 4, 168 (in Armenian).
2. Արզումանյան Լ. 2024, Երևանյան թատրոն 90-ականներ, Երևան, «Մագաղաթ»:
Arzoumanyán L. 2024, Yerevanian Theater. The Nineties, Yerevan, Magaghat (in Armenian).
3. Արծրունի Ա. 1969, Լ. Շանթի «Հին Աստուածները» բեմադրությունը, Սփիւռք, 23 փետրվարի, 2:
Arzrouni A. 1969, The Production of Levon Shant's "Ancient Gods", Spyurk, February 23, 2 (in Armenian).
4. Արծրունի Ա. 1969, Բազում աղմուկ վասն ոչինչի, բեմադրիչ Գրիգոր Սաթամեան, Սփիւռք, 8 հունիսի:
Arzrouni A. 1969, Much Ado About Nothing, directed by Krikor Satamian, Spurk, June 8 (in Armenian).
5. Արծրունի Ա. 1970, «Խաչագողի» ներկայացումը, Ազդակ, 28 հունվարի:
Arzrouni A. 1970, The Performance of the Swindler ("Khachagogh"), Aztag, January 28 (in Armenian).
6. Արծրունի Ա. 1971, Մշակույթ և արվեստ. «12 զայրացած մարդիկ», Ազդակ, 23 ապրիլի:
Arzrouni A. 1971, Culture and Art: "12 Angry Men", Aztag, April 23 (in Armenian).
7. Բ.Փ. 1969, Թատրոն և բեմական կեանք. «Հին Աստուածներ» բեմադրությունը՝ Պերճ Ֆազլեանի, Բագին, N 3, 67:
B.P. 1969, Theater and Stage Life: Berj Fazlian's Production of "Ancient Gods", Bagin, N 3, 67 (in Armenian).
8. Գ.Մ. 1970, Հ.Ե.Ը.-ի Վ. Փափազեան թատերախումբը կը ներկայացնէ Մոլիերի «Խաչագողը», Զարթոնք, 16 հունիսի:
G.M. 1970, The AYA V. Papazian Theater Troupe Presents Molière's The Swindler, Zartok, June 16 (in Armenian).
9. Գրիգորեան Գ. 1969, «Հին Աստուածները» ներկայացման առթիւ, Ազդակ, 10 փետրվարի:

- Grigorian G. 1969, On the Occasion of the Performance of "Ancient Gods", Aztag, February 10 (in Armenian).
10. Թիւթինճեան Վ. 1960, Ժայռը (Վրթանես Փափազեան), Զարթօնք, 2 հունիսի, 3: Tutunjian V. 1960, The Rock (Vrtanes Papazian), Zartonk, June 2, 3 (in Armenian).
11. Թղթակից 1967, «Վ. Փափազեան» խումբը տուաւ փայլուն ներկայացում մը, Յառաջ, 24 դեկտեմբերի: Correspondent 1967, "V. Papazian" Troupe Gave a Brilliant Performance, Haratch, December 24 (in Armenian).
12. Թղթակից 1969, Հ.Ե.Ը. Վահրամ Փափազեան թատերախումբ Գրիգոր Սաթամեանի բեմադրութիւն. Բազում աղմուկ վասն ոչինչի, Զարթօնք, 23 ապրիլի: Correspondent 1969, AYA Vahram Papazian Theater Troupe: Krikor Satamian's Production of Much Ado About Nothing, Zartonk, April 23 (in Armenian).
13. Թղթակից 1992, Հ.Բ.Ը.Մ. Վահրամ Փափազեան թատերախումբը բեմի վրայ Խօսնակ, դեկտեմբեր, 41: Correspondent 1992, The AGBU Vahram Papazian Theater Troupe on Stage, Khosnag, December, 41.
14. Թոփալեան Ն.Վ. 1971, Փափազեան թատերախումբ «12 զայրացած մարդիկ» բեմադրիչ Պերճ Ֆազլեան, Զարթօնք, 1 մայիսի: Topalian N.V. 1971, Papazian Theater Troupe: 12 Angry Men, directed by Berj Fazlian", Zartonk, May 1 (in Armenian).
15. Իսահակյան Ա. 1979, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, «Սովետական գրող», նամակ N 309, 37: Isahakyan, A. 1979, Collected Works, vol. 6, Yerevan, Sovetakan Grogh Publishing House, Letter N 309, 37 (in Armenian).
16. Կասսիրեր Է. 2008, Էսսե մարդու մասին, Երևան, «Սարգիս Խաչենց փրինթ ինֆո»: Cassirer E. 2008, An Essay on Man, Yerevan, Sargis Khachents Print Info (in Armenian).
17. Հ.Բ.Ը.Մ.–Հ.Ե.Ը. Վահրամ փափազեան թատերախումբ 1984, Պեյրութ, 1959–1984, «Պայքար» հրատ.: AGBU–AYA. Vahram Papazian Theater Troupe 1984, Beirut, 1959–1984, Baikar Publishing House (in Armenian).
18. Հ.Բ.Ը.Մ. «Վահրամ փափազեան» թատերախումբին նորագոյն յաջողութիւնը 2019, «Ավանա ստախոսը» ներկայացումը, Զարթօնք, 28 մարտի: AGBU. The Latest Success of "Vahram Papazian" Theater Troupe 2019, The Performance of "Cash on Delivery", Zartonk, March 28 (in Armenian).
19. Հ.Ե.Ը. Վահրամ Փափազեան թատերախումբը 1965, Մուսա լեռան 40 օրերը, Սփիւռք, 9 հունիսի: AYA. Vahram Papazian Theater Troupe 1965, The 40 Days of Musa Dagh, Spurk, June 9 (in Armenian).
20. Մաթեան Հ. 1992, «Վահրամ Փափազեան» թատերախումբով շարունակուող երթը, Շիրակ, դեկտեմբեր, 111: Matian H. 1992, The Ongoing Journey of "Vahram Papazian" Theater Troupe, Shirak, December, 111 (in Armenian).

21. Ն.Թ. 1970, Վ. Փափազեան թատերախումբին նոր ներկայացումը Մոլիերի «Էսաշագողը», Զարթոնք, N 93, 18 հունվարի:
N.T. 1970, The V. Papazian Theater Troupe's New Production of Molière's "The Swindler", Zartok, N 93, January 18 (in Armenian).
22. Նագգաշեան Հ. 1967, «Կորսուած նամակ մը» Փառաւոր իրագործում Հ.Ե.Ը.Վ. Փափազեան թատերախումբի, Զարթոնք, 17 դեկտեմբերի:
Naghashian H. 1967, "A Lost Letter": A Magnificent Achievement by the AYA V. Papazian Theater Troupe, Zartok, December 17 (in Armenian).
23. Պ.Օ. 1970, «Մոլիերի Թարթիւֆը» որակաւոր բեմադրութիւն մը, Զարթոնք, հունվարի 29:
P.O. 1970, "Molière's Tartuffe": A High-Quality Production, Zartok, January 29 (in Armenian).
24. Սահակեան Մ. 2019, Հ.Ե.Ը.-ի Վահրամ Փափազեան թատերախումբը իր բարձունքին վրայ, Արարատ, 27 մարտի:
Sahakian M. 2019, The AYA Vahram Papazian Theater Troupe at its Peak, Ararat, March 27 (in Armenian).
25. Սաթամեան Գ. 1984, Ներկայացման առիթու Հ.Բ.Ը.Մ. «Վահրամ Փափազեան թատերախումբ, Պեյրուք, 1959–1984, «Պայքար» հրատ.:
Satamian G. 1984, On the Occasion of the Performance, AGBU "Vahram Papazian" Theater Troupe, Beirut, 1959–1984, Baikar Publishing (in Armenian).
26. Սամօ 1969, Թատրոն. «Հին Աստուածներու» արդի բեմադրութիւնը, Արարատ, 30 հունվարի:
Samo 1969, Theater: A Modern Production of "Ancient Gods", Ararat, January 30 (in Armenian).
27. Սփիւռք 1992, Մշակութային բաժին: Լիբանանահայ մշակոյթի ամիս, Սփիւռք, N 1, 44:
Spyurk 1992, Cultural Section: Lebanese-Armenian Culture Month, Spurk, N 1, 44 (in Armenian).
28. Վահրամ Փափազեան թատերախումբը 1965, Մուսա լեռան 40 օրերը, Զարթոնք, 28 մայիսի:
Vahram Papazian Theater Troupe 1965, The 40 Days of Musa Dagh, Zartok, May 28 (in Armenian).
29. Քեօսեան Գ. 1969, Փափազեան» թատերախումբ. «Հին աստուածներ», Զարթոնք, 5 փետրվարի:
Keoseian G. 1969, Vahram Papazian Theater Troupe: "Ancient Gods", Zartok, February 5 (in Armenian).
30. Ֆազլեան Պ. 2004, Վրաններ պողոտաներու վրայ, Անթիլիաս, հրատ. նշված չէ:
Fazlian B. 2004, Tents on the Avenues, Antelias, Publisher not indicated (in Armenian).